ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/14» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 02 դեկտեմբերի 2024թ.

Ժամը 11:00

Մասնակցում էին՝

Նախագահ՝ Սեդրակ Կիրակոսյան

Անդամներ՝ Խաչատուր Մաջարյան, Հայկ Հովհաննիսյան

Քարտուղար՝ Նելլի Աբովյան

1.Էլեկտրոնային աճուրդի հայտերի ներկայացման մասին

1.1 Ընդունել ի գիտություն, որ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/14» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի հայտերի ներկայացման վերջնաժամկետն էր 26.11.2024թ-ին ժամը 10:00-ին, իսկ էլեկտրոնային աճուրդը սկսվել էր 27.11.2024թ.-ին ժամը 10:00-ին:

2. Բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերի առկայությունը և դրանց համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին

2.1 Հրավերով սահմանված կարգի պահանջներին համապատասխան մասնակից «ՄԻՆՈՆ» ՍՊԸ-ի առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի ապրանքային նշանի և արտադրողի անվանման սյունակներում արձանագրվել էին անհամապատասխանություն, ուստի հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել էր նիստը և հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում էր ուղարկել մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակից՝ «ՄԻՆՈՆ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է անհամապատասխանությունը:

2.2 Հանձնաժողովը որոշեց՝ Մասնակից «ՄԻՆՈՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0

3. Ընթացակարգի ընտրված՝ հաղթող, մասնակիցներին որոշելու և հայտարարելու մասին.

3.1. Հիմք ընդունելով Մասնակիցների կողմից ներկայացրած հայտերը և վերջնական գնային առաջարկները՝ Հանձնաժողովը որոշեց՝ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/14» ծածկագրով գնման ընթացակարգի
N 1 չափաբաժնի մասով ընտրված՝ հաղթող, մասնակից ճանաչել «Յունիքիմ» ՍՊԸ-ին,
N 3 չափաբաժնի մասով ընտրված՝ հաղթող, մասնակից ճանաչել «Տրանզիտ Պրո» ՍՊԸ-ին,
N 8 չափաբաժնի մասով ընտրված՝ հաղթող, մասնակից ճանաչել «ՄԻՆՈՆ» ՍՊԸ-ին,
NN 2,4,5,6,7,9 չափաբաժնի մասով ընտրված՝ հաղթող, մասնակից ճանաչել «Էսմոնդ Հովհաննիսյան Վահեի» Ա/Ձ-ին:

4.Պայմանագիր կնքելու որոշման մասին.

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/14» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովը որոշեց՝

4.1. Հրապարակել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը:

4.2. «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/14» ծածկագրով գնման ընթացակարգի մասով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

4.3. Ընտրված՝ հաղթող, մասնակցի հետ «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն՝ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ **Ս. Կիրակոսյան**

Քարտուղար _____ **Ն. Աբովյան**

Անդամներ՝ _____ **Խ. Մաջարյան**

_____ **Հ. Հովհաննիսյան**